

**ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻԿՈՆԻԱՅԻ
ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1198-1219 թվականներ)
ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կիլիկյան Հայաստանի պատմության ամենաուշագրավ և կարևոր դրվագներից մեկը արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմությունն է: Մասնավորապես այդ բնագավառում չափազանց կարևոր է հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունների հետազոտությունը:

Հայտնի է, որ 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբներին Մերձավոր Արևելքում կարևոր փոփոխություններ էին տեղի ունեցել, որոնց հետ Կիլիկիայի հայկական թագավորությունը չէր կարող հաշվի չնստել: Նախ՝ բավականին մեծ հզորության էր հասել Եգիպտոսի Այուբյան սուլթանությունը, որը չափազանց վտանգավոր թշնամի էր նաև Կիլիկյան Հայաստանի համար: Մյուս կողմից էլ ուժեղանում էր պապական դիվանագիտությունը արևելքում, ինչպես նաև տեղի էին ունենում երրորդ, չորրորդ և հինգերորդ խաչակրաց արշավանքները¹: Դրանց զուգահեռ դեռևս շարունակում էին գործել Բյուզանդական կայսրությունը, Արևելքի խաչակրաց պետությունները և Իկոնիայի սուլթանությունը, որոնք նախկինում արդեն մի քանի անգամ անհանգստացրել էին Կիլիկիայի հայկական թագավորությանը: Ինչ վերաբերում է Կիլիկիայի հայկական թագավորությանը, ապա պետք է նշել, որ հիշյալ պատմական ժամանակաշրջանում Լևոն Մեծագործը, լինելով հնուտ դիվանագետ և իմաստուն քաղաքագետ, օգտակար դաշինքներ կնքեց ժամանակի բազմաթիվ միապետերի հետ: Իր երկրորդ ամուսնությամբ նա դարձավ Կիպրոսի և Երուսաղեմի թագավոր Ամորի Լուսինյանի փեսան, նվաճեց նաև հիվանդախնամների և Տևտոնական ասպետների բարեկամությունը՝ նրանց շնորհելով զգալի տարածքներ: Կարևոր ենք համարում նաև նշել, որ Իկոնիայի սուլթանությունը Բյուզանդական

¹ R.W.Thomson, The Crusades through Armenian eyes, օգտվել ենք [www. Doaks. Org](http://www.Doaks.Org) սայթից, C. Hillenbrand, The Crusades, Islamic perspectives, Edinburg, 1999, օգտվել ենք <http://books.google.am> սայթից, T. F. Madden, The new concise history of the crusades, Oxford, 2005, օգտվել ենք <http://books.google.am> սայթից, J. G. Gazarian, The Armenian kingdom in Cilician during the crusades, The integration of Cilician Armenians with the latins, 1080-1393, Caucasus World, 2000, օգտվել ենք <http://books.google.am> սայթից, J. Riley-Smith, The Oxford history of the Crusades, Oxford university press, 2000, օգտվել ենք <http://books.google.am> սայթից. (Վերցված է 20.03.2010 թ.), С.Морусон, Крестовоносцы, Москва, 2003, с. 29-70.

կայսրության հաշվին ընդարձակեց իր տարածքները և ժամանակի ընթացքում սկսեց մեծ վտանգ ներկայացնել հայկական թագավորության համար: Ինչ վերաբերում է Իկոնիայի սուլթանությանը, ապա, ինչպես իրավացիորեն նշում է Կիլիկյան Չայաստանի ճանաչված մասնագետ Գ. Միքայելյանը, նրանք հարևանների դեմ նվաճողական արշավանքներ էին կատարում՝ հանուն ավատական վերնախավի և մահմեդական առևտրականների շահերի, որպեսզի նոր հողեր զավթեին բեկերին բաժանելու համար, ինչպես նաև գրավեին կարևոր քարավանային ուղիները և տարանցիկ կենտրոնները²:

Քաղաքական նմանատիպ պայմաններում չափազանց կարևորվում էր Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականության պետական մարմինների գործունեությունը: Վերջիններս պետք է այնպիսի ճշգրիտ և հավասարակշռված քաղաքականություն վարեին, որից հայկական թագավորությունը չտուժեր:

Չայտնի է, որ Լևոն Մեծագործը դեռևս իր իշխանության սկզբնական շրջանում արդեն բախվեց փոքրասիական թուրքմենների արշավանքների, իսկ մեկ տարի անց՝ 1188 թ., հաղթեց Իկոնիայի սուլթանության զորքերին՝ հետ խլելով Պրականա ամրոցը³: Բացի դրանից, օգտվելով Իկոնիայի սուլթան Քիլիջ-Արսլանի 1192 թ. և Սալահ ադ-դինի 1193 թ. մահից հետո սելջուկյան և Այուբյան սուլթանություններում ծագած երկպառակտչական պատերազմներից՝ Լևոն Մեծագործը բավականին ընդլայնեց Կիլիկյան Չայաստանի իշխանության սահմանները՝ տպավորիչ հաղթանակներ տանելով իր հարևանների նկատմամբ: Այդ մասին է վկայում նաև Միքայել Ասորի պատմիչը՝ համաձայն որի Լևոնը տիրեց շուրջ յոթանասուներկու բերդերի, որոնք նախկինում պատկանում էին սելջուկ-թուրքերին և հույներին.« Եւ ինքն արիագոյնն Լեւոն տիրեաց եւթանասուն և երկու բերդի, էր զոր նախնիքն իւր կալեալ էին և էր զոր ինքն էառ ի՛Յունաց և ի՛ Թուրքաց»⁴ : Միքայել Ասորու հաղորդումը հաստատում են նաև միջնադարի նշանավոր պատմիչներ Աբուլ-Ֆարաջը⁵ և Վարդան Արևելցին⁶:

² Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 171:

³ Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, կազմեց Վ. Չակոբյանը, հ. Բ, Երևան, 1956, էջ 103, Սմբատ Սպարապետ, Պատմութիւն, Փարիզ, 1856, էջ 105:

⁴ Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 502:

⁵ The Chronography of Gregory Abul Faraj, (Bar Habraeus), English translation, Vol. A., London, 1932, p. 344.

⁶ Վարդան Արևելցի, Չաւաբումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 180:

Հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև մի փոքրիկ ընդհարում էլ տեղի ունեցավ Լևոն Մեծագործի թագավոր հռչակվելուց առաջ, երբ վերջինս Կիլիկիային միացրեց Իսապրիան արևմուտքում⁷ և Լուլոն բերդը հյուսիսում:

Լևոն Մեծագործի թագավորության սկզբնական ժամանակաշրջանում Իկոնիայի սուլթանն էր Ռուքն էդ դին Սուլեյման Բ-ն (1196-1204), որին հաջողվեց Իկոնիայի սուլթանությունը փրկել քայքայումից:

Ավաղ, միջնադարյան աղբյուրները շատ սակավ տեղեկություններ են հաղորդում նշյալ ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձերի և մասնավորապես Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության հարաբերությունների պատմությունից: Ինչպես գիտենք, Լևոնը արքա հռչակվելուց հետո արտաքին քաղաքականության մեջ շատ լուրջ ուշադրություն էր դարձնում Անտիոքի դքսության նվաճման խնդրին, որի պատճառով հայերը ստիպված են լինում պատերազմել միաժամանակ Հալեպի էմիր ալ-Ջահիրի և Իկոնիայի սուլթանության դեմ, որոնք օգնության էին եկել Բոհեմոնդին:

Փաստորեն, սկսվում է նոր բախում Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության միջև, որի պատճառը Անտիոքն էր: Ընդհանրապես դժվար է պատկերացնել, թե Իկոնիան շատ մտահոգված կարող էր լինել Անտիոքի դքսության ճակատագրով: Ամենայն հավանականությամբ սա շատ հարմար առիթ էր Իկոնիայի սելջուկների համար, որ նոր պատերազմ սկսեին հայկական թագավորության դեմ: Ինչպես հայտնի է, դեռևս 13-րդ դարի հենց սկզբներին, երբ սկսվեց Կիլիկիայի պայքարը Անտիոքի դեմ, վերջիններիս դաշնակիցների մեջ էր նաև Իկոնիայի սուլթանությունը: Ըստ մեզ՝ դրա պատճառն այն էր, որ Լևոն արքան 12-րդ դարի 90-ական թվականներին Իկոնիայի սուլթանությունից խլել էր մի շարք լեռնային ամրոցներ:

Այսպիսով՝ Իկոնիայի սուլթանությունը, որն 13-րդ դարի սկզբներին բավականին ուժեղացավ, ակտիվորեն սկսեց աջակցել Անտիոքի դքսությանը և Հալեպի սուլթանությանը՝ սպառնալով հայկական թագավորությանը:

Ս. Տեր-Ներսիսյանը նշում է, որ 1201 թ. Իկոնիայի սուլթանությունը արդեն արշավանք է ձեռնարկում Կիլիկիայի հայկական թագավորության դեմ, սակայն էական հաջողության չի հասնում⁸: Դժբախտաբար հեղինակը ցույց չի տալիս, թե որ աղբյուրից է օգտվել: Ցավոք մեզ ուսումնասիրած աղբյուրներում չենք հանդիպել նման տեղեկության: Հակառակ Ս. Տեր-Ներսիսյանի՝ Վ. Տեր-Ղևոնդյանը նշում է, որ

⁷ Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 432: Այդ մասին տես նաև՝ Կ. Սուրբաքյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 409:

⁸ Ս. Տեր-Ներսիսյան, Կիլիկյան Հայաստանի թագավորությունը, թարգմանված Լ.Տեր-Պետրոսյանի կողմից, Խաչակիրները և հայերը, հ. Ա , Երևան, 2007, էջ 401:

հիշյալ 1201 թ. Կիլիկյան Չայաստանի հետ ընդհարվել է ոչ թե Իկոնիայի սուլթանությունը, այլ Անտիոք-Տրիպոլիի կոմսությունը⁹: Միջնադարյան աղբյուրները հիշյալ արշավանքի մասին որևէ տեղեկություն չեն հաղորդում: Ինչ վերաբերում է հետազոտողներին, ապա պետք է ասել, որ նրանք ևս վերը նշված խնդրի վերաբերյալ տեսակետ չեն արտահայտում: Կարծում ենք՝ ավելի ճշգրիտ կարող է լինել Վ. Տեր-Ղևոնդյանի տեսակետը, որովհետև այդ մասին է վկայում հայոց արքայի դիմում-նամակը Չոռմի քահանայապետին, որտեղ հայոց արքան խնդրում էր, որ պապը միջնորդ լիներ իր և Բոհեմոնդի միջև սկսված պատերազմը դադարեցնելու հարցում¹⁰: Ինչ վերաբերում է Իկոնիայի սուլթանության՝ դեպի Կիլիկյան Չայաստան կատարած արշավանքին, այն հավանաբար տեղի է ունեցել ոչ թե Կիլիկյան Չայաստանի, այլ բուն Չայաստանի ուղղությամբ, և պարզապես հետազոտողը շփոթել է դրանք: Մեր այդ կարծիքի օգտին է խոսում նաև միջնադարի պատմիչ Սմբատ Սպարապետ վկայությունը իր նշանավոր աշխատությունում: Չեղինակը հստակ մատնանշում է, թե կոնկրետ, որ ուղղությամբ են արշավել Իկոնիայի սուլթանության զորքերը. « Ի թուին ՈԾ (650-1201) գնաց Ըռուզնատին սուլտանն բազու զօրօք յարեւելս, և էառ զքաղաքն Թեոդուպօլիս, որ է Կարնոյ քաղաք, ոչ պատերազմացալ՝ այլ սիրով , և գնաց խրոխտալով ի վերայ Մժնկերտոյ, և մինչդեռ նեղէր պատերազմաւ...»¹¹: Պետք է նաև նշել, որ այսքանով ռազմաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում չհանդարտվեց: Խնդիրն այն է, որ թե՛ Չալեպի տիրակալ ալ-մալիք ալ-Ջահիրը և թե՛ Իկոնիայի սուլթանությունը խիստ անհանգստացած էին Կիլիկիայի հայկական թագավորության հզորացմամբ: Եվ վերջիններս պետք է ամեն ջանք գործադրեին, որպեսզի թուլացնեին Կիլիկիայի հայկական թագավորության դիրքերը մերձավորարևելյան տարածաշրջանում:

Ինչպես հայտնի է, այս ժամանակաշրջանում Կիլիկյան Չայաստանը իր ռազմական ներուժով կարող էր հաղթել և՛ Անտիոքի դքսությանը, և՛ խաչակրաց մյուս իշխանություններին: Նման պայմաններում, հակառակ Կիլիկյան Չայաստանի, ձևավորվեց Անտիոք-Իկոնիա և Չալեպի սուլթանություններ դաշինքը, որը չափազանց վտանգավոր էր հայկական թագավորության համար¹²: Իրենց հերթին էլ թե Չալեպի սուլթանությունը, թե Իկոնիան խիստ անհանգստացած էին Կիլիկիայի հայկական թագավորության հզորացմամբ: Եվ Իկոնիայի սուլթանությունը, շատ բնական է,

⁹ Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Չայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, Երևան, 1994, էջ 116:

¹⁰ Pontificia commissio ad redigendum codicem iuris canonici orientalis , Fontes, Series III, vol. II, Acta Innocentii, p. III (1198-1216), Vatican, 1944, p. 559-562, հղումը կատարված է Վ. Տեր-Ղևոնդյանի աշխատությունից, էջ 116:

¹¹ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 212:

¹² Վ. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 115:

չպետք է թույլ տար, որ հայոց արքան ընդարձակեր իր երկրի սահմանները դեպի հյուսիս և հյուսիս-արևելք:

Կարևոր ենք համարում նաև նշել, որ Չալեպի սուլթանությունը պայքարում էր Կիլիկյան Չայաստանի դեմ նաև այն պատճառով, որ եթե հայերը վերջնականապես գրավեին Անտիոքը, ապա այն լուրջ վտանգ կներկայացներ իրենց համար:

Չայտնի է, որ 1203-1206 թվականներին Կիլիկյան Չայաստանի և դաշնակիցների միջև (Անտիոքի դքսություն, Չալեպի սուլթանություն, Իկոնիայի սուլթանություն) տեղի ունեցան որոշակի ռազմական գործողություններ, որոնք հիմնականում ծավալվում էին հայկական թագավորության և Չալեպի սուլթանության միջև: Չամենայն դեպս, պատմիչների երկերում որևէ բախում չի արձանագրվել Կիլիկիայի և Իկոնիայի միջև:

1204 թ. Իկոնիայի սուլթանության նոր տիրակալ դարձավ Գիյաս էդ դին Քեյ - Խոսրովը (1204-1210): Առաջին հայացքից թվում է, թե այս տիրակալի գահակալումը պետք է որ բարենպաստ լիներ երկկողմ հարաբերությունների զարգացման համար, սակայն այդպես չեղավ: Գիյաս էդ-դին Քեյ-Խոսրովին, սակայն գահի համար մղված պայքարում աջակցել էր նրա եղբորը՝ Ռուքն ալ-դինին: Այս հանգամանքը դժվար թե մոռացվեր Գիյաս էդ-դին Քեյ-Խոսրովի կողմից: ԵՎ այս ժամանակաշրջանից սկսած բավականին բարդանում են հարաբերությունները Կիլիկյան Չայաստանի և Իկոնիայի սուլթանության միջև:

Վերադառնալով երկկողմ պետությունների հարաբերությունների հետազոտությանը՝ մեկ անգամ ևս կցանկանայինք նշել, որ Լևոնը ժամանակին ստացել էր Գիյաս էդ դինի կալվածքների և բերդերի մի մասը, որոնք գտնվում էին Ալբիստանի երկրի մեջ, երբ վերջինս ապաստանել էր հայոց արքայի մոտ¹³: Չավանական է նաև այն հանգամանքը, որ Գիյաս էդ դին Քեյ-Խոսրովը Լևոնի մոտ եղած ժամանակ նվիրել էր հայոց արքային այդ կալվածքները՝ հավանաբար քաղաքական աջակցություն ստանալու ակնկալությամբ: Բայց սելջուկ միապետի քաղաքական հաշվարկները սխալ էին, քանի որ հայոց արքան չէր օգնել իրեն: ԵՎ հավանաբար դա էր պատճառը, որ Գիյաս էդ-դին Քեյ-Խոսրովի գահին բազմելուց հետո թշնամաբար տրամադրվեց Լևոն Մեծագործի նկատմամբ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Իկոնիայի սուլթանը իր գահակալության հենց սկզբնական շրջանում, օգտվելով այն հնարավորությունից, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը պատերազմում է Չալեպի սուլթանության դեմ, հետ գրավեց այդ

¹³ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 450:

տարածքները: Նման տեսակետ կա նաև Ա. Ալպոյաճյան աշխատություններից մեկում¹⁴: Ավաղ, միջնադարյան աղբյուրներում չի պահպանվել այն տեղեկությունը, թե հստակ երբ է տեղի ունեցել այդ իրադարձությունը: Անդրադառնալով Կիլիկիայի հայկական թագավորությանը՝ պետք է նշել, որ Լևոն Մեծագործը հենց 1205 թ. անհաջող փորձեր կատարեց Իկոնիայի սուլթանությունից հետ գրավել Ալբիստանը: Նշենք, որ Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերություններն ավելի սրվեցին նաև այն պատճառով, որ լատինական կայսրությունը հաստատվեց Պոլսի մեջ (1204 թ), իսկ հայերը իրենց քաղաքականությամբ բարեկամ էին լատիններին, մինչդեռ Իկոնիայի սելջուկները՝ թշնամի: Ինչպես նշում է ճանաչված պատմաբան Մ. Օրմանյանը, Լևոն արքայի բարեկամանալը լատինական իշխանությունների հետ նպատակ էր հետապնդում օգտագործել վերջիններիս ուժերը՝ հակառակ մահմեդական պետությունների¹⁵: Այս փաստը նույնպես հետագայում որոշակի դեր էր խաղալու Կիլիկյան Չայաստանի և Իկոնիայի սուլթանության հարաբերությունների բարդացման գործում:

Փաստորեն, նշյալ ժամանակաշրջանում միջազգային իրավիճակը մերձավորարևելյան տարածաշրջանում կտրուկ փոխվում է՝ հօգուտ Կիլիկյան հայաստանի հակառակորդների: Անշուշտ նման պարագայում որոշակի մեղավորություն ունեին նաև հայ դիվանագետները, ովքեր ոչ մի կերպ չպետք է թույլ տային, որ տարածաշրջանում երեք հարևան պետությունների դաշինք ձևավորվեր հայկական թագավորության դեմ, քանի որ այն բավականին վտանգավոր էր և հղի լուրջ հետևանքներով: Սակայն Լևոն Բ-Ն շուտով ճկուն դիվանագիտական քայլ ձեռնարկեց՝ բարեկամական հարաբերություններ հաստատելով Մերձավոր Արևելքի հզոր տիրակալի՝ Եգիպտոսի Այուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, և դա օգնեց հայոց արքային հետագա քաղաքական ծանր պայքարում¹⁶: Անշուշտ, այս քայլը կարելի է համարել հայոց թագավորության դիվանագիտական ծառայության կողմից որոշակի նվաճում, քանի որ ի դեմս Իկոնիայի սուլթանության, Անտիոքի դքսության և Չալեպի սուլթանության միասնության դեմ ձևավորվեց Կիլիկյան Չայաստան-Եգիպտոսի Այուբյան սուլթանություն դաշինքը: Իհարկե, դժվար է պատկերացնել, թե Եգիպտոսի տիրակալը կմասնակցեր Կիլիկյան Չայաստանի հակառակորդների դեմ ռազմական գործողություններին, սակայն կարևոր է այն հանգամանքը, որ Եգիպտոսի տիրակալ ալ-Ադիլը այնքան հզոր և ազդեցիկ անձնավորություն էր, որ կարող էր սաստել Չալեպի սուլթանության ագրեսիվ քայլերը հայկական թագավորության դեմ: Եվ Լևոն արքայի քաղաքական հաշվարկներն այդ ուղղությամբ տվեցին իրենց

¹⁴ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիոյ, Գահիրէ, էջ 509:

¹⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, էջմիածին, 2001, սյուն 1818:

¹⁶ Վ. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 122:

պտուղները: Ճիշտ է, այս համագործակցությունը բավականին դրական էր Կիլիկյան Հայաստանի համար, սակայն հայկական թագավորության արտաքին քաղաքական իրավիճակը չէր լավանում: Բանն այն է, որ, եթե ալ-Ադիլը շուտով զսպեց Հալեպի սուլթանությանը, որը ժամանակավորապես դադարեցրեց Կիլիկյան Հայաստանի դեմ ռազմական գործողությունները, ապա Իկոնիայի սուլթանությունը բնավ մտադիր չէր կանգ առնել, և դրա վառ վկայությունն է այն փաստը, որ սուլթանության զորքերը 1207 թ. նոր արշավանք են ձեռնարկում Կիլիկյան Հայաստանի սահմանների վրա, գրավում են Ատալիան¹⁷, իսկ 1208 թ. Կիլիկիայի ամենակարևոր ամրոցներից մեկը՝ Բերդուսը¹⁸ գերի տանելով ամրոցի տիրոջը՝ Գրիգորին. « Խոսրու շահ սուլտանն յԻկոնիոյ՝ որդին Խլիճասլանին էառ զԲերդուսն՝ և կալաւ զտէրն նորա զԳրիգորն»¹⁹: Բերդուսի գրավման փաստը արձանագրում են նաև Սմբատ Սպարապետը²⁰, Սամվել Անեցի²¹, մանր ժամանակագիրները²² և Արաբական²³ և մի շարք այլ աղբյուրներ:

Փաստորեն, Լևոն Մեծագործին ոչ մի կերպ չէր հաջողվում հարաբերությունները կարգավորել այդ մահմեդական պետության հետ: Հետաքրքիր է նաև Քամալ-ադ-դին Իբն ալ-Ադիմ պատմիչի հաղորդումը: Նա գրում է, որ Հիջրայի 605 թ. (1208 թ. հուլիս 16-1209 թ. հուլիսի 6) Քեյ-խոսրով իբն Կըլըջ Արսլանը հարձակվել էր Կիլիկիայի վրա՝ օգնություն խնդրելով նաև սուլթան ալ-մալիք ալ-Ջահիրից²⁴: Ըստ Անանուն Եդեսացու՝ դա տեղի է ունեցել ի պատասխան նախկինում տեղի ունեցած դեպքերի²⁵: Թե նախկինում ինչ դեպքեր են եղել, հեղինակը չի նշում: Կարծում ենք՝ Քամալ-ադ-դինի այս վկայությունները վերաբերում են հենց 1208 թ. դեպքերին: Շարունակելով իր միտքը՝ հեղինակը գրում է, որ հայերը սկզբում

¹⁷ Ատալիան Կիլիկիայի արևմուտքում գտնվող բերդերից է, հայտնի է նաև Անթալիա անունով, Հ. Մ. Յովհաննեսեան, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքներն, Վենետիկ, 1989, էջ 415, Կ. Մուրաֆյանը Ատալիայի գրավումը Իկոնիայի սուլթանության կողմից թվագրում է 1206 թվականով, Կ.Մուրաֆյան, նշվ. աշխ., էջ 410:

¹⁸ Բերդուսը Լեռնային Կիլիկիայի հին և անվանի բերդերից մեկն է, տես՝ Հ. Մ. Յովհաննեսեան, նշվ. աշխ., էջ 173, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., 1885, էջ 196:

¹⁹ Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 146:

²⁰ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 215:

²¹ Սամվել Անեցի, էջ 146:

²² Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, Կազմեց Հ.Հակոբյանը, հ. Ա, Երևան, 1951, էջ 78, հ. Բ, Երևան, 1956, էջ 62:

²³ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան աղբյուրների մասին, Կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 228:

²⁴ Վ.Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 122-123:

²⁵ Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմանությունը Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 171:

ջարդեցին թշնամուն, սակայն հետո, Հալեպի զորքի օգնությամբ նոր հարձակման անցնելով, գրավեցին Բերդուսը²⁶: Քաղաքական այս դեպքերի մասին շատ կարևոր տեղեկություն է տալիս 13-րդ դարի պատմիչ Սմբատ Սպարապետը, որը նշում է, որ սուլթանը, խորհրդակցելով հայոց կաթողիկոսի հետ, մտավ Կիլիկյան Հայաստանի սահմանները և գրավեց Բերդուսը. «Իսկ սուլտանն Խոսրու շահն, որդի Խլիճ Արսլանին, միապետեալ տիրեաց Հռոմոնց աշխարհին, և սկսաւ եղջիւր ածել թագաւորին Լեւոնի. և ի սադրելոյ և խորհրդակցութենէ տէր Յոհանիսի, եկն բազում զօրօք ի վերայ Բերդուսին...»²⁷: Ինչպես նկատում ենք, բավականին հետաքրքիր տեղեկությունների ենք հանդիպում Սմբատի մոտ: Կարծել, թե հայոց կաթողիկոսը կարող էր համագործակցել թշնամական երկրի ղեկավարի հետ, դժվար է: Խնդիրն այն է, որ այս ժամանակաշրջանում Լևոն Մեծագործը բանտարկել էր կաթողիկոսի ազգականներին, որի պատճառով էլ վեճ էր առաջացել արքայի և կաթողիկոս Հովհաննես Սսեցու միջև²⁸: Վեճը այնքան էր խորացել, որ հայոց արքան և իշխանները հրաժարվել էին ճանաչել Հովհաննես Սսեցուն որպես կաթողիկոս և առաջ էին քաշել Մամեստիայի արքեպիսկոպոս Դավիթ Արքակաղնեցու թեկնածությունը: Նման պայմաններում Հովհաննես Սսեցին մնացել էր Հռոմկլայում: ԵՎ շատ հավանական է, որ Իկոնիայի սուլթանը, ունենալով բավական լավ հարաբերություններ հայոց կաթողիկոսի հետ, հենց այս խնդրի պատճառով էր արշավել դեպի Բերդուս: Այդ մասին է վկայում հենց Սմբատի տողերի շարունակությունը, ուր նշվում է, թե սուլթանը սկսեց վախեցնել Լևոն Մեծագործին, ապա խորհրդակցեց Հովհաննես Սսեցու հետ և հարձակվեց²⁹: Հնարավոր է, որ իրականում ոչ մի խորհրդակցություն էլ չի եղել, պարզապես ժամանակակիցներն այնքան դժգոհ են եղել արքայի և կաթողիկոսի վեճից, որ ցանկացել են բարդել հայոց հայրապետի վրա: Կարծում ենք, որ Իկոնիայի սուլթանին դժվար թե մտահոգեր կաթողիկոսի իրավունքների պաշտպանության խնդիրը: Պարզապես նրան առիթ էր հարկավոր Կիլիկյան Հայաստանի դեմ արշավելու համար: Քաղաքական նմանատիպ պայմաններում հայոց արքա Լևոնը դիվանագիտական ճկուն քայլ կատարեց: Նա կրկին դիմեց ալ-մալիք ալ -Ադիլի միջնորդությանը, իսկ վերջինս էլ համոզեց Իկոնիայի սուլթանին և ալ մալիք ալ- Ջահիրին, որ Լևոն Բ-ի հետ հաշտության պայմանագիր կնքեն:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 215:

²⁸ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., սյուն 1834, Ա.Հովհաննիսյան, Պետության և եկեղեցու հարաբերությունները Լևոն Բ-ի կառավարման ժամանակաշրջանում, Տարեգիրք Աստվածաբանության ֆակուլտետի, Երևան, 2009, էջ 190, Ա.Սուքիասյան, Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 65:

²⁹ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 215:

Նախ փորձենք պարզել, թե որ թվականին է կնքվել այդ պայմանագիրը: Ավաղ, միջնադարյան աղբյուրները, որոնք խոսում են վերը նշված ժամանակաշրջանի վերաբերյալ, շատ քիչ տեղեկություններ են հաղորդում այդ արշավանքի մասին, իսկ թվականի առնչությամբ ընդհանրապես որևէ մեկը չի խոսում: Ամեն պարագայում ակնհայտ է մեկ հանգամանք, որ այդ պայմանագիրը կնքվել է թշնամու զորքերի արշավանքներից հետո՝ 1208-1209թթ.: Աներկբա է նաև այն հանգամանքը, որ տվյալ ժամանակաշրջանում Իկոնիայի սուլթանության կողմից հաշտության պայմանագիրը կնքվել է Գիյաս էդ-դին Քեյ-խոսրովը, որն իշխել է մինչև 1210թ., իսկ ըստ հայկական աղբյուրների՝ 1209 թվականին³⁰: Աղբյուրներից միայն իմանում ենք, որ Բերդուսի գրավումը տեղի է ունեցել 1208 թվականին³¹: Բայց ինչպես հայտնի է, ռազմական գործողությունները Բերդուսի գրավումով չեն ավարտվել և շարունակվել են հաջորդ տարի ևս: Բացի դրանից, երբ Լևոն Մեծագործը դիմեց Եգիպտոսի տիրակալ ալ-Ադիլին, ժամանակ էր պետք, որպեսզի վերջինս բանակներ մյուս կողմերի հետ ևս: Կարծում ենք՝ առավել հավանական կարող է լինել հենց 1209 թվականը: Դրա մասին է վկայում նաև Քամալ ադ-դին պատմիչը, ըստ որի վեր նշյալ ռազմական գործողությունները տեղի են ունեցել հիջրայի 605 թվականին, որը համապատասխանում է 1208 թվականի հուլիսի 16-ից մինչև 1209 թվականի հուլիսի 6-ը³² ընկած ժամանակահատվածին: Այս փաստը հաշվի առնելով կարելի եզրակացնել, որ այդ պայմանագիրը կնքվել է 1209 թվականին:

Այժմ քննարկենք այն հարցը, թե որոնք կարող էին լինել պայմանագրի բովանդակային դրույթները: Այս հարցում ևս աղբյուրների ընձեռած վկայությունները շատ աղքատիկ են: Մասնավորապես հայ պատմիչներից և ոչ մեկը որևէ տեղեկություն չի տրամադրում պայմանագրի մասին, միայն բավարարվում են՝ նշելով Բերդուսի կորուստի փաստը³³: Հիշյալ խնդրին որոշակի անդրադարձ է կատարում կրկին Քամալ ադ-դին պատմիչը, որի օգնությամբ էլ մենք կարող ենք որոշ տեղեկություններ ստանալ վերը նշված պայմանագրի բովանդակային դրույթների մասին:

Այսպես՝ ըստ հեղինակի՝ հայերը պարտավորվում էին տաճարականներին վերադարձնել Բաղրասը, չմիջամտել Անտիոքի գործերին և վերադարձնել ժամանակին սելջուկներից խլած հողերը³⁴: Թե որոնք էին այդ տարածքները, հեղինակը չի նշում: Սելջուկների մասին հաղորդման մեջ պատմիչը հավանաբար

³⁰ Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 82, Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 216 :

³¹ Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, էջ 78, Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 215, Արաբական աղբյուրները, էջ 228

³² Վ.Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 122:

³³ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 215, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, էջ 78, Սամվել Անեցի, էջ 146:

³⁴ Վ.Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 162:

նկատի ունենալ այն ժամանակաշրջանը, երբ Լևոնը գրավեց յոթանասուներկու բերդեր, որոնց մի մասը պատկանում էր Իկոնիայի սուլթանությանը:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի տեսակետներ կան գիտական գրականության մեջ: Ի դեպ ժամանակակից հետազոտողների ճնշող մեծամասնությունը չի անդրադարձել այդ պայմանագրին: Վերոնշյալ խնդրի մասին կարծիք է հայտնել ֆրանսիացի անվանի գիտնական Ռընե Գրուսեն, համաձայն որի այդ պայմանագրով Լևոնը խոստացավ այլևս որևէ արշավանք չձեռնարկել դեպի Անտիոք, ինչպես նաև Բաղրասի (Գաստոն) բերդը վերադարձնել Տաճարականներին³⁵: Կարծում ենք՝ այս դրույթը չափազանց կարևոր է և անպայման կարող էր լինել պայմանագրում, քանի որ հենց Անտիոքի համար մղվող պայքարի հետևանքով էին այս երեք պետությունները թշնամացել Կիլիկիայի հայկական թագավորության հետ: Ականավոր հայագետ Ղևոնդ Ալիշանը կարծում է, որ արքան ստիպված էր նշված պայմանագրով Իկոնիայի սուլթանությանը զիջել Բերդուս ամրոցը՝ Ալբիստանից հարավ-արևմուտք ընկած Կիլիկիայի սահմանամերձ բերդը, և նրանց հարձակումներից պաշտպանել իր պետության հյուսիսային սահմանները³⁶: Կարելի է համաձայնվել Ղ. Ալիշանի տեսակետի հետ, քանի որ այն ապացուցում են նաև աղբյուրները: Այսպիսով՝ հետազոտելով աղբյուրների տեղեկությունները և գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ գալիս ենք հետևյալ եզրակացության. Կիլիկիայի հայկական թագավորության և եռակողմ պետությունների միջև կնքված պայմանագրի բովանդակային դրույթներն հետևյալն էին.

1. Կիլիկիայի հայոց արքա Լևոնը վերադարձնում էր Բաղրասի ամրոցը Տաճարականներին:
2. Հայկական թագավորությունը չէր միջամտելու Անտիոքի գործերին:
3. Հայոց արքան խոստացավ այլևս որևէ ռազմական գործողություն չձեռնարկել Անտիոքի դեմ:
4. Կիլիկիայի հայկական թագավորությունը հանձն էր առնում Իկոնիայի սուլթանությանը զիջել նախկինում խլած հողերը:
5. Երկու կողմերի միջև դադարում էին ռազմական գործողությունները:

Ինչպես նկատում ենք, այս պայմանագիրը բավականին ծանր կարող էր լինել Կիլիկիայի հայկական թագավորության համար, քանի որ արտաքին քաղաքականության բնագավառում որոշակի զիջումներ էին կատարում: Ըստ մեզ՝ արքայի նման զիջողական քաղաքականությունը ժամանակավոր բնույթ էր կրում, և Լևոնը բնավ էլ մտադիր չէր զիջումների գնալ: Դրա մասին է վկայում նաև այն փաստը,

³⁵ Ռընե Գրուսեն, Պատմություն խաչակրաց, թարգմանված Լ.Տեր-Պետրոսյանի կողմից, Երևան, 2007, էջ 302:

³⁶ Ղ.Ալիշան, Սիսուան, նշվ. աշխ., էջ 507:

որ վերոհիշյալ կետերից ապագայում արքան կատարեց միայն մեկը՝ Իկոնիայի սուլթանությանը զիջելով որոշակի տարածք:

1210 թ. մահացավ Իկոնիայի սուլթան Իզզ էդ-դին Քեյ-խոսրովը, և հայկական թագավորությունը որոշեց անմիջականորեն միջամտել հարևան պետության գահակալական պայքարին, որն սկսվել էր մահացած արքայի որդիների միջև: Ըստ մեզ՝ հայոց արքայի ակտիվ գործունեությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Լևոնը քաջ գիտակցում էր, թե ինչպիսի կարևորություն է ներկայացնում այն հարցը, թե ով պետք է գահակալեր Իկոնիայի սուլթանությունում: Եվ միջամտելով նշված խնդրին՝ շատ բնական է, որ Կիլիկիայի հայոց թագավորությունը ցանկանում էր աջակցել իրեն ձեռնտու անձին: Սկզբնական շրջանում հայոց արքան Իզզ էդ դինի Քեյ-Քաուսի և Ալա էդ-դին Քեյ-Կոբադի միջև տեղի ունեցած պայքարում օգնեց վերջինիս: Սակայն նրա եղբայրը՝ Իզզ էդ -դին Քեյ-Քաուսը, հասկանալով, որ կարող է պարտության մատնվել, անցավ լուրջ դիվանագիտական բանակցությունների: Նա հասավ նրան, որ ոմն Ջելալի միջնորդությամբ Լևոն արքային քաշեց իր կողմը: Շուտով Ալա էդ դինի մյուս դաշնակիցներն էլ հետ քաշվեցին, և վերջինս պարտվեց: Ինչպես նկատում ենք, հայոց արքան որոշակի մասնակցություն է ունենում Իկոնիայի սուլթանությունում սկսված գահակալական պայքարին և օգնում Իզզ էդ-դին Քեյ- Քաուսին՝ բազմելու հայրական գահին: Թե ինչը կարող էր փոխվել հայոց արքայի նախկին որոշման մեջ, դժվար է ասել: Կարծում ենք, որ Լևոնի որոշման մեջ մեծ դեր են խաղացել և միջնորդները և այն փաստը, որ արքան հասկացել էր, որ իր թագավորության անվտանգության համար ավելի ձեռնտու է Իզզ էդ-դին Քեյ-Քաուսի գահակալումը, քան եղբոր՝ Ալա էդ-դին Քեյ-Կոբադի: Հետագայում էլ ժամանակը ցույց տվեց, որ Իզզ էդ-դին Քեյ-Քաուսը ավելիցանկալի էր հայերին, քան իր եղբայրը, որը հետագայում դարձավ Իկոնիայի սուլթաններից ամենահզորը և քիչ վնաս չհասցրեց նաև Կիլիկիայի հայկական թագավորությանը:

Իբն Բիբին, որը տվյալ ժամանակաշրջանի մասին բավական հարուստ հաղորդումներ է տալիս, նշում է, որ Իզզ էդ-դին Քեյ-Քաուսը շուտով արշավանք է կատարում մի շարք տարածքների վրա, այդ թվում և Կիլիկյան Հայաստանի³⁷: Այստեղ հարց է առաջ գալիս, թե ինչու Իկոնիայի սուլթանը նման ձևով վարվեց հայոց թագավորության հետ: Բացի Իբն Բիբիից՝ միջնադարյան մյուս աղբյուրները այդ մասին լռում են: Ամենայն հավանականությամբ պատմիչը նշյալ արշավանքը շփոթել է բուն Հայաստանի ուղղությամբ կատարված արշավանքի հետ, քանի որ նշյալ

³⁷ Ибн Бибн, Селджук-Наме, www, vostlit, info.

շրջանում արշավանք էր կատարվել դեպի պատմական Հայաստանի տարածքները: Մեր տեսակետի ճշմարտացիությունն ապացուցում է այն փաստը, որ ուրիշ որևէ այլ աղբյուրում (թե՛ հայկական, թե՛ օտարալեզու) մենք չենք հանդիպում հաղորդման, որտեղ նշվեր, թե Իկոնիայի սուլթանությունը հարձակվել է Կիլիկյան Հայաստանի վրա: Ամեն պարագայում Լևոն Մեծագործը զգուշանում էր Իկոնիայի սուլթանությունից և մշտապես մտածում որոշակի միջոցներ կիրառել նրանց ուժերը ջլատելու ուղղությամբ: Այդ մասին է վկայում նաև միջնադարի խոշոր ռազմական և դիվանագիտական գործիչ Սմբատ սպարապետը, որը մեզ տեղեկացնում է, որ 1211 թվականին Լևոն արքայի խորհրդով Կարին քաղաքի շահ Տուղրիլը մեծ զորքերով հարձակվեց Կեսարիայի վրա³⁸: Շուտով նրան օգնության եկավ նաև հայոց արքան իր զորքերով³⁹: Տուղրիլ շահի կողմից Կեսարիայի պաշարման մասին խոսում է նաև Աբուլ-Ֆիդան իր ժամանակագրության մեջ⁴⁰: Միավորելով իրենց ուժերը՝ դաշնակիցները սկսում են պայքարը սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քաուսի դեմ, սակայն չկարողանալով ոչինչ անել՝ մի քանի օր հետո նահանջում են: Ինչպես նկատում ենք, հայոց արքայի և Իկոնիայի նոր սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քաուսի հարաբերությունները հենց սկզբնական շրջանից լարված բնույթ են ստանում: Նշյալ ժամանակաշրջանի մասին խոսում է նաև Ռընե Գրուսեն, որը նշում է, որ եթե 1211 թվականին հայկական զորքերը Իկոնիայի սուլթանությունից գրավել են Լարանդան (Կարաման) և Հերակլիան⁴¹: ճիշտ է, նա ցույց չի տալիս այն աղբյուրը, որից օգտվել է, բայց այդ տեսակետը կարող է ճշմարիտ լինել, քանի որ 1218 թ. Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության միջև կնքված պայմանագրով Լևոն արքան մի շարք տարածքների հետ Լարանդան նույնպես հանձնեց սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քաուսին: Կարևոր ենք համարում նաև նշել, որ թեև 1209 թվականին պայմանագրով Կիլիկիայի հայկական թագավորությունը խոստացավ այլևս արշավանք չձեռնարկել դեպի Անտիոք, սակայն կարճ ժամանակ անց հրաժարվեց իր խոստումից և նոր քայլեր ձեռնարկեց իր նպատակին հասնելու համար: Շուտով Կիլիկիայի հայկական թագավորությունը բավականին ակտիվ կերպով շարունակում է պայքարը Անտիոքի գահը գրավելու համար: Թե ինչը կարող էր դրդել հայոց արքային նման քայլ կատարելու, դժվար է ասել: Ամենայն հավանականությամբ 6-7 տարին բավական էր, որպեսզի Կիլիկիայի հայկական թագավորությունը վերամիավորեր իր ռազմական ուժերը և նոր պայքարի դուրս գար Անտիոքի դեմ:

³⁸ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 218:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Արաբական աղբյուրները, էջ 229:

⁴¹ Ռընե Գրուսեն, նշվ. աշխ., էջ 307, 340:

Այսպես՝ 1216 թ. Լևոն արքան մեծ դժվարությամբ կարողացավ գրավել Անտիոքը և գահին բազմեցրեց Ռուբեն-Ռայմոնդին⁴²: ԵՎ ընդհանրապես, Լևոն Բ-ի գահակալման ողջ ժամանակաշրջանում հայկական թագավորության արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը Անտիոքի դքսության նվաճման հարցն էր, որի համար հայկական թագավորությունը մեծ ջանքեր գործադրեց նպատակին հասնելու համար: Սակայն այս պարագայում հայոց արքայի դիվանագիտական հաշվարկները ճիշտ դուրս չեկան: Խնդիրն այն է, որ Իկոնիայի սուլթանությունը, տեղյակ լինելով տարածաշրջանի քաղաքական անցուղարձերին, ինչպես նաև այն հանգամանքին, որ Լևոնը հայոց զորքերի հետ գտնվում է Անտիոքում, 1216 թ. մի նոր արշավանք ձեռնարկեց հայոց թագավորության դեմ: ԵՎ այս արշավանքի սկսելը շատ ճկուն դիվանագիտական քայլ էր Իկոնիայի սուլթանության կողմից, քանի որ նրանք լավ էին հասկանում, որ հայոց արքան իր ռազմական ուժերի մի մասը դուրս էր հանել երկրից և դժվար թե հասցներ նահանջել:

Կիլիկյան Հայաստանի համար ստեղծվեց մի բարդ իրավիճակ: Կարևոր ենք համարում նաև նշել, որ այս շրջանում հայոց թագավորության արտաքին քաղաքականության պետական մարմինները այդքան հստակ հաշվարկ չկատարեցին: Սուլթան Իզզ էդ-դին Քեյ-Քաուսին օգնելուց հետո հայերը այնպես պետք է անեին, որ Իկոնիայի սուլթանությունը դառնար իրենց դաշնակիցը, բայց հակառակը ստացվեց: Վերջինս ոտքի կանգնելով գործնական քայլերի դիմեց՝ գահակալական պայքարի ընթացքում սուլթանության կորցրած տարածքները վերականգնելու: Հիշատակված արշավանքի արդյունքը եղավ այն, որ հայոց բանակը, ճիշտ է, թեպետ չպարտվեց, սակայն 1218 թ. կնքված պայմանագրով Իկոնիայի սուլթանությանը զիջեց բավական տարածքներ և ֆինանսներ⁴³:

Փաստորեն՝ Լևոն Մեծագործը իր գահակալման վերջին տարիներին ստիպված էր զգալի զիջումներ կատարել հարևան Իկոնիայի սուլթանությանը, որի հետևանքով որոշակիորեն նվազեց Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական իշխանությունը տարածաշրջանում: ԵՎ բացի այդ, հայոց

⁴² Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 219, Bar Habraeus, էջ 370, Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 79: Այդ մասին տես նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ. գ, Երևան, 1976, էջ 692, Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 177-178, Լ.Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, էջ 68, С. Mutafian, The brilliant diplomacy of Cilician Armenia, Edited by R. Hovhannisian and S. Payaslian, California, 2008, p. 103, J. Morgan, The history of the Armenian people, From the Renotest times to the Present day, Boston, 1965, p. 225.

⁴³ 1218 թվականի պայմանագրի մասին մանրամասներն տես՝ Ա. Հովհաննիսյան, Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև 1218թ. կնքված հաշտության պայմանագրի շուրջ, Բանբեր Երևանի Համալսարանի, 2010, 131. 6, էջ 71-78:

թագավորական վերնախավը կարողացավ վերջնականապես կարգավորել հարաբերությունները Իկոնիայի սուլթանության հետ: Սակայն ամեն պարագայում էլ պետք է փաստել, որ Լևոն Մեծագործը մնաց որպես մեծ միապետ և դիվանագետ ոչ միայն Կիլիկիայի հայկական թագավորության, այլև ողջ Մերձավոր Արևելքի պատմության մեջ:

Summery

The article discusses one of the most significant pages of the history of foreign policy of the Cilician Kingdom, which is the relationship of the Armenian kingdom with the Ikoneia Sultanate during the reign of the king of Levon B. The article gives the details both of the reasons of the enmity existing between Cilician kingdom and the Sultanate and of the reasons for creation of the anti-Cilician treaty in the early years of the XIII century.

The article also pays a special attention to the issues concerning to the treaty itself and its content signed between the Kingdom of Cilicia and the Sultanate of Ikoneia in 1209. It also mentions the situation in which the Cilician Armenian Kingdom happened to be while fighting for the Antiock region. Some conclusions have been made at the end of the article.

Էջմիածին ամսագիր